ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2024 թվականի N 1359-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ գլխի դրույթներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 13-Ն հրամանի պահանջներով և հիմք ընդունելով 2024 թվականի հոկտեմբերի 30-ի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2.Սահմանել, որ համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթը անցկացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:
3.Հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի Քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետ Սաթենիկ Մարտիրոսյանին, որը պարտավորվում է մասնակիցներին բացատրել թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, արձանագրել և հանձնաժողովի անդամների հետ միասին ստորագրել նիստերի արձանագրությունները:
4.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2024 թ. հոկտեմբերի 30
ք. Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված է ՀՀ Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի ղեկավարի
30 հոկտեմբերի 2024թ.
թիվ 1359-Ա որոշմամբ

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի

Հ/Հ	Ազգանուն, անուն	Զբաղեցրած պաշտոնը	Որ կազմակերպությունն է ներկայացնում
1.	Արշակ Ռաֆիկի Ղորղանյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ	ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ
2.	Ասթինե Գևորգի Ապիտոնյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ	ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ
3.	Ֆելիքս Կամոյի Պետրոսյան	Արմավիր համայնքի ղեկավարի տեղակալ	Արմավիրի համայնքապետարան
4.	Կարեն Սարգիսի Մկրտչյան	Արմավիր համայնքի ղեկավարի տեղակալ	Արմավիրի համայնքապետարան
5.	Հայկ Անդրանիկի Մելեքյան	Արմավիր համայնքի ավագանու անդամ	Արմավիր համայնքի ավագանի
6.	Դարբինյան Տիգրանուհի	Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ ՊՈԱԿ-ի միջին մասնագիտական կրթական ծրագրի ղեկավար	Գիտական և ուսումնական հաստատության ներկայացուցիչ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ